Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց

Թեմա՝ Մենթորի աշխատանքի արդյունավետությունը ուսուցչական անձնակազմի արձագանքմամբ

Վերապատրաստող, մենթոր՝Լիլիթ Աղբալյան

Ուսուցիչ՝ Լիլիթ Կարապետյան

Իջևան 2023

Բովանդակություն 2

Ներածություն 3

Հիմնական մասեր

Մաս 1.

Ինչ է մենթորությունը և ինչու է այն կարևոր 5

Մաս 2.

Ինչպես լինել արդյունավետ մենթոր 8

Մաս 3.

Հարցում մենթորի աշխատանքի արդյունավետության վերաբերյալ՝ աջակցություն ստացած ուսուցչական անձնակազմին և արդյունքների դիտատարկում 12

Եզրակացություն 14

Օգտագործված գրականության ցանկ 15

Հավելվածներ 16

Ներածություն

Հայաստանի հանրակրթության ոլորտի վերջին տարիների բարեփոխումներում առանցքային տեղ են գրավում ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության ոլորտի բարեփոխումները: Հայաստանի կրթական համակարգում ընթացող բարեփոխումների արդյունավետությամբ է մեծապես պայմանավորված մեր երկրի ապագա զարգացումը:

Կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող բովանդակություն: Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ և որակյալ ուսումնական բովանդակություն, ապա հասարակությունը իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն: Առաջնահերթ առաջադրանք նկատվում է ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացում և ժամանակակից կյանքի կարիքները բավարարող մանկավարժական կազմի ձևավորում:

Այսօր մեծացել է բարձր որակավորում ունեցող, ստեղծագործ աշխատող, սոցիալապես ակտիվ և մրցունակ ուսուցչի պահանջարկը, որն ի վիճակի է կրթել սոցիալականացված մարդ արագ փոփոխվող աշխարհում: Վերջին շրջանում հաճախակի են հնչում արտահայտություններ՝ կյանքի որակ, կրթության որակ, սոցիալական հաջողություն, կրթության որակի բարելավում: Իհարկե, դրան հնարավոր չէ հասնել առանց նորարարական տեխնոլոգիաների, ժամանակակից ուսումնական միջոցների ներդրման, ուսուցչի մասնագիտության հեղինակության բարձրացման, առաջավոր մանկավարժական փորձի բացահայտման և տարածման: Այս ամենին հնարավոր չէ հասնել առանց յուրաքանչյուր ուսուցչի պրոֆեսիոնալիզմի բարձրացման: Ուսուցչի մասնագիտական կարևոր որակները՝ քրտնաջան աշխատանք, աշխատանքային կարողություն, կարգապահություն, պատասխանատվություն, նպատակ դնելու և դրան հասնելու ուղիներ ընտրելու ունակություն, կազմակերպություն, համառություն, իրենց մասնագիտական մակարդակի համակարգված և համակարգված բարելավում. իրենց աշխատանքի որակը մշտապես բարելավելու ցանկություն և այլն: Լավ ուսուցչի անձնական որակներն են մարդասիրություն, ինքնատիրապետում, կարգապահություն, վարքի ճկունություն, գաղափարական համոզմունք, քաղաքացիություն,նախաձեռնություն, պարկեշտություն, անկեղծություն, ինքնակատարելագործման ձգտում: Մասնագիտական և առարկայական զարգացման կատարելագործումը իրենից ենթադրում է ակտիվ մասնակցություն մեթոդական միավորումներին, ուսուցիչների խորհուրդներին, սեմինարներին, գիտաժողովներին, վարպետության դասերի աշխատանքներին, ժամանակակից տիրապետում կրթական տեխնոլոգիաներին, մեթոդական տեխնիկային, մանկավարժական գործիքներին և իհարկե հետազոտական աշխատանքներին: Ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարելավման հարցի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից աշխարհում մասնագետների գիտելիքների ու հմտությունների հնացման արագացող գործընթացով:

Մասնագիտական կոմպետենտությունը ուսուցչի որակյալ աշխատանքի ցուցիչներից է: Նրա մասնագիտական մակարդակի բարելավումը յուրաքանչյուր ուսուցչի առաջնահերթ պարտականությունն է:

Մանկավարժությունն այն մասնագիտութ յուններից է, որի դեպքում հուզական այրումը անխուսափելի է, եթե շարունակական մասնագիտական զարգացումը չապահովվի: Հուզական այրումը, սպառումը, դասավանդող մասնագիտների շրջանում տարածված ժամանակակից համաճարակ է, որը կարող է հանգեցնել ֆիզիկական և հուզական ուժասպառության և անարդյունավետության զգացողության: Առարկայական և մասնագիտական հմտությունների զարգացման գործընթացում ուսուցիչներին ուղղորդելու և աջակցելու անհրաժեշտություն է առաջանում: Ուսուցչական անձնակազմի հետ շարունակական մասնագիտական արդյունավետ աշխատանք են տանում մենթորները: Ուստի մենթորական աջակցությունը նպաստում է ուսուցիչների մասնագիտական աճին:

Մաս 1

Բաժին ա.

Ինչ է մենթորությունը և ինչու է այն կարևոր

Մենթորությունը երկու մարդկանց (մենթորի ու ուսուցչի) համագործակցություն է: Մենթորը ուսուցչին փոխանցում է արժեքավոր գիտելիքներ, հմտություններ, պատկերացումներ և օգնում ծավալելու արդյունավետ աշխատանքային գործունեություն:

Մենթորը տիրապետում է «գործնական գիտելիքի», որը դասավանդման փորձառություն է: Տիրապետում է առարկայի բովանդակությանը: Սովորողի, կրթական ծրագրի, դասավանդման յուրահատուկ իրավիճակների և, առհասարակ, մանկավարժության վերաբերյալ ունի հստակ գիտելիքներ և հմտություններ:

Մենթորի կարողունակությունների շրջանակը ներառում է հետևյալ հիմական գործառույթները.

● Մենթորները ոչ միայն սովորեցնում ու գնահատում են, այլև մոդելավորում են ուսուցչի աշխատանքը իրական համատեքստում՝ սովորելու համար օպտիմալ պայմաններ ստեղծելով ուսուցչի համար

● Մենթորը օգտակար է լինում ուսուցչին անկախ նրա աշխատանքային փորձից ու աշխատած տարիների քանակից: Նա միշտ ունի գործնական օժանդակություն ցանի համար անհրաժեշտ փորձ:

● Մենթորը աջակցում է բոլոր այն իրավիճակներում, որտեղ ուսուցիչը անվստահ է: Նա օգնում է կայացնելու կշռադատված որոշումներ, խուսափելու աշխատանքային մարտահրավերներից, տիրապետելու նոր հմտությունների, հուսահատության պահերին գտնելու նոր հեռանկարներ:

● Մենթորը իրագործում է դրական (աջակցող) և բացասական (մարտահրավեր պարունակող) քննադատական հետադարձ կապ:

● Մենթորը հասանելի է ու ներգրավված: Աջակցում է ուսուցչին նաև պաշտոնական հանդիպումներից դուրս:

● Քաջալերում ու մատնանշում է ուսուցչի հաջողություններն ու ձեռքբերումները:

Մենթորները մենթիներին արժեքավոր գիտելիք ու հմտություններ փոխանցելու շնորհիվ նրանց օգնում են զարգացնել կարիերան ու բարելավել աշխատանք-անձնական կյանք հավասարակշռությունը: Ուսուցիչները (մենթիները) աշխատանքային գործունեության տարբեր փուլերում մենթորի կարիք են ունենում: Այդ աջակցության շնորհիվ մենթին կարողանում է հասնել տվյալ շրջանում իր առջև դրված նպատակին կամ գտնել ինչ-որ խնդրի լուծում:

Դա կարող է տեղի ունենալ ցանկացած պահի և այն ծավալով, որքան անհրաժեշտ է:

Բաժին բ.

Մենթորի և ուսուցչի պարտականությունները

<u>Մենթորը պետք է կարողանա.</u>

• Հետևել ժամանակին ու թեմայից չշեղվելուն: Որքան էլ ասելիքն ու քննարկելու ենթակա նյութը մեծ լինի, կարևոր է քննարկման բուն թեմայից չշեղվելը:

• Ուշադիր լսել: Ուշադիր լսելը առանցքային հմտություն է, որը շատ կարևոր է աշխատանքա- յին գործունեության մեջ: Ուշադիր լսելը ներառում է նաև ոչ խոսքա յին ազդակների ընկալում, մարմնի լեզվի նկատմամբ ուշադրություն, արձագանքներ (իսկապե՞ս , իսկ հետո՞): Կարևոր է հարցերով, ճշգրտումներով պարզել ասածի ճիշտ ընկալումը:

• Հանդես գալ որպես դիտարկող, ոչ թե մեկնաբանող:

• Ընդհանրացնել ու սեփական բառերով վերարտադրել լսածը/տեսածը:

• Տալ համապատասխան հարցեր (բաց և բացահայտող հարցեր, որոնք սկսվում են հետևյալ բառերով կամ արտահայտություններով՝ Ի՞նչ. . . , Ինչպե՞ս. . . , Բացատրեք, թե. . . , Պատմեք ինձ. . .)

•Մարահրավեր նետել. կարելի է նշել մենթիից լսածի անհամապատասխանությունները, ենթադրությունները կամ դրդել նոր գործողություններ կատարելու: Մարտահրավերները պետք է նետվեն զգուշորեն ու նրբանկատորեն, որպեսզի խթանեն մենթիի հնարավորությունները,ոչ թե արգելակեն նախաձեռնողականությունը:

• Քաջալերել մենթիին՝ բացահայտելու նոր հնարավորություններ ու տարբերակներ:

• Խորհուրդներ տալ, կիսվել փորձառությամբ ու գիտելիքով՝ հետևելով նախնական պայմանավորվածությանը:

• Գործողությունները պլանավորելիս լինել սպեցիֆիկ, իրատես ու ժամանակի մեջ հստակեց-ված:

• Վերանայել առաջընթացը:

<u>Ուսուցիչը պետք է կարողանա.</u>

• Պատասխանատվություն ստանձնել բովանդակության համար: Չակնկալել, որ մենթորը կլուծի ծառացած խնդիրները կամ արագ կուղղի սխալները:

• Բաց լինել ինքնաճանաչման և փոփոխությունների նկատմամբ:

• Բաց լինել մենթորի ասածների ու խորհուրդների նկատմամբ: Սա չի նշանակում համաձայնել ամեն հարցում, այլ նշանակում է ընդունել դրանք, ենթարկել վերլուծական անդրադարձի և ավելի ուշ որոշել, արդյո՞ք ընդունելի էին դրանք, թե՝ ոչ:

- Սեսիաներից հետո վերլուծական անդրադարձի ենթարկել քննարկված հարցերը:
- Կատարել այն ամենն ինչի շուրջ համաձայնութ յան են եկել:

Մաս 2

Բաժին ա.

Ինչպես լինել արդյունավետ մենթոր

Մենթորը սովորաբար տարիների վաստակով բազմափորձ ուսուցիչ է, ով ոչ միայն փոխանցում է կրթական ու առարկայական ծրագիրն իրականացնելու իր սեփական փորձը սկսնակ ուսուցչին, այլ նաև ներառում է նրան տվյալ դպրոցին հատուկ կրթական ու մշակութային կյանքին: Արդյունավետ մենթոր ուսուցչի դերն անգնահատելի է սկսնակ ուսուցիչների աշխատանքային առօրյաում: Նա կարող է ազատել սկսնակ ուսուցչին առաջին աշխատանքային օրերի, շաբաթների, ամիսների ու տարիների սթրեսային իրավիճակներից՝ փոխանցելով նրան ուսուցիչ-սովորող սիրո ու հարգանքի վրա հիմնված միջանձնային ճիշտ փոխհարաբերությունների, դասի ու ամբողջ օրվա պլանավորման, առարկայական ծրագրի իրագործման փորձված գործառույթների, ուսումնական նախագծերի իրականացման վերաբերյալ իր անձնական՝տարիների ընթացքում ձեռք բերած փորձը:

Մենթորին բնորոշ հատկանիշներն են.

- Լավ ունկնդիր է
- Ապահովում է ինչպես դրական, այնպես էլ բացասական քննադատական արձագանքներ. աջակցող է և մարտահրավեր նետող:
- Ճկուն է և կարողանում է հարմարվել մենթիի անհատական կարիքներին:
- Հասանելի է և ներգրավված:
- Հոգում է մենթիի մասնագիտական կարիքների մասին, նաև պաշտոնական հանդիպումներից դուրս:
- Զգայուն է մենթիի անձնական և մասնագիտական կարիքների նկատմամբ:
- Գտնում է որոշ գաղափարներ մենթիի հետ կիսվելու համար:
- Հանդիսանում է դերային մոդել:
- Մենթիի հետ փոխհարաբերություններից օգուտներ է քաղում:
- Նպաստում է խնդիրների համատեղ լուծմանը:
- Հարգված է գործընկերների և ղեկավարության կողմից:
- Ողջունում է մենթիի նվաճումները:
- Համեստ է և ինքն իր արարքներին անդրադարձող:
- Մենթիի հետ փոխհարաբերություններում զգայուն է մշակութա յին տարբերությունների նկատմամբ:

Ամերիկյան «Encompassing Education– Ներառող կրթություն» էլեկտրոնային մանկավարժական բլոգ-ամսագրում հրապարակված է Դիանա Մակ-Քինլիի հոդվածը՝ «The Importance of Mentoring New Teachers – Սկսնակ ուսուցիչների մենթորության կարևորությունը» վերնագրով:[1] Հոդվածի հեղինակը՝ վերլուծելով Լիզ Ռիգսի «Ինչու՞ են ուսուցիչները ազատվում իրենց աշխատանքից (սկսնակ

[1] https://incompassinged.com/2017/07/14/the-importance-of-mentoring-new-teachers/

ուսուցիչների մոտ 50%-ը)» ուսումնասիրությունը, եկել է այն եզրակացության, որ բոլոր սկսնակ ուսուցիչները պետք է ունենան իրենց մենթոր ուսուցիչը, որպեսզի չհիասթափվեն իրենց մանկավարժական գործունեության առաջին տարիներին: Փորձը ցույց է տալիս, որ համագործակցության արդյունավետությունը ավելի բարձր է լինում, երբ ուսուցիչն է ընտրում իր մենթորին:

Իր մենթոր ուսուցչին ուղղված որքա՛ն գորովանք, սեր ու հարգանք կա ուսուցիչ Հիֆեր Ուոլֆերթ-Գորենի ‹‹Every Teacher Needs a Mentor– Յուրաքանչյուր ուսուցիչ մենթորի կարիք ունի›› հոդվածում:[2]
,,Լիզն այն մարդն է, ում հետ ես անհոգ ծիծաղում եմ ամեն ուրբաթ, երբ մենք փակում ենք մեր սենյակները ընդմիջման ժամին ու ծլկում ենք սրճարան: Նա այն մարդն է, ով իմ ուղեղը վառ ու ստեղծագործ է պահում և չի թողնում, որ այն պատվի, պատվի ամենօրյա միօրինակության թանձր շղարշով: Նա է, որ վերջին պահին իմ դասի պլանն է կազմում, երբ ստիպված եմ լինում խնամել իմ հիվանդ երեխային: Լիզն առաջին մարդը է, ում հետ կիսում եմ իմ փոքրիկ հաղթանակները և շփոթեցնող պարտությունները: Յուրաքանչյուր ուսուցիչ մի ‹‹Լիզի›› կարիք ունի: Մենթորներն ավելին են, քան ընկերները: Նրանք ոչ պաշտոնական ու ոչ ցուցադրական ձևով են փոխանցում իրենց գիտելիքներն ու փորձը: Նրանք թողնում են, որ խոսես ու արտահայտես քո մտքերը, լուծումներ առաջարկես, բայց կանգնեցնում են, չեն համաձայնվում, երբ սխալ ուղղությամբ ես գնում: Նրանք օգնում են, որպեսզի ձևավորես կրթական սկզբունքներով քո սեփական վստահ ձանն ու խոսքը:..

Ամերիկյան ‹‹Education Week – Կրթական շաբաթ››[3] էլեկտրոնային պարբերականում հրապարակված են մենթոր ուսուցիչ Քիմբերլի Լոնգի առաջարկած ութ անհրաժեշտ որակները այն վաստակաշատ ու բազմափորձ ուսուցիչների համար, ովքեր ուզում են ստանձնել մենթոր ուսուցչի պատասխանատվությունը:

Հարգանքը միջանձնային փոխհարաբերությունների առաջին որակն է, որը պետք է ձևավորվի մենթորի և սկսնակ ուսուցչի միջև: Հարգանքը մի օրում չի ձևավորվում: Այն վաստակում են ժամանակի ընթացքում՝ միջանձնային փոխհարաբերությունների չնչին թվացող մանրուքներում, գիտելիքի ու փորձի փոխանցման անկեղծ ու ոչ պաշտոնական զրույցներում:

Լսելը – Սկսնակ ուսուցչին համբերատար ձևով լսելը օգնում է մենթորին ավելի լավ ճանաչել նրան, ավելի լավ, քան առաջին քայլերն անող ուսուցիչը կարող էր սպասել: Լսելով նրան մենթորը հասկանում է, թե երբ է սկսնակ ուսուցիչը լարված լինում վատ վարք ունեցող սովորողների պատճառով, երբ է ինքնավստահ լինում և երբ է օրն ամբողջությամբ հաջողված լինում: Այդ ամենը համակցելով ու վերլուծելով՝ մենթորը կարողանում է ճիշտ ձևով օգնության ձեռք մեկնել:

[2] https://www.edutopia.org/article/every-teacher-needs-mentor

[3] https://www.edweek.org/teaching-learning/opinion-eight-qualities-of-a-great-teacher-mentor/2014/10

Մարտահրավերներ նետելը – Լավ մենթոր ուսուցիչը չի թողնում հանգստանալ ձեռք բերածով ու մնալ գտնված հարմարավետ հունի մեջ: Նա անընդհատ արթուն է պահում սկսնակ ուսուցչին, օգնում է նրան գտնելու ինքնազարգացման նոր ուղիներ՝ փնտրելով և փորձարկելով դասավանդման նոր մեթոդներ: Մենթորը նաև խորհուրդներ է տալիս, թե ինչպես ճիշտ արձագանքել ուսումնական պարապմունքի ընթացքում հանդիպող տարբեր իրավիճակներում:

Համագործակցելը – Մենթոր ուսուցիչը կազմակերպում է սկսնակ ուսուցիչների աշխատանքային հանդիպումներ: Այդ հանդիպումները երկուստեք շահավետ են լինում, քանի որ հանդիպման ավարտին ունենում են նոր գաղափարներ, դժվար իրավիճակները հաղթահարելու նոր ռազմավարություններ:

Հաջողությունը գնահատելը – Մենթոր ուսուցիչը անկեղծորեն ուրախանում և նշում է իր սկսնակ ուսուցչի ամենափոքր ձեռքբերումները: Չէ՞ որ նրա հաջողությունը նաև մենթորի հաջողությունն է:

Ճշմարտությունն ասելը – Ազնվությունը ցանկացած փոխհարաբերության հիմքն է: Մենթորը պետք է ճիշտն ասի իր սկսնակ ուսուցչին, օգնի նրան հասկանալու և յուրացնելու դպրոցի ‹‹կարելիների›› և ‹‹չի կարելիների›› քաղաքականությունը ու շատ այլ բաներ, որոնք չեն սովորեցնում համալսարաններում:

Ապահով լինելը – Սկսնակ ուսուցիչը պետք է զգա, որ նորմալ է սխալվելը և այդ մասին մենթորին ասելը: Մենթորին սխալվելու իրողությունը վստահելը և օգնություն ակնկալելը նրանց փոխհարաբերության հիմնաքարային որակներից է: Երբ սխալը խոստովանվում է, մենթոր ուսուցիչը պետք է զգույշ լինի իր պատասխան խոսքում՝ սկսնակ ուսուցչին չվիրավորելու համար: Այդ իրավիճակում ասված խոսքերը երկար են հիշվում: Սկսնակ ուսուցիչը պետք է վստահ լինի, որ իր մենթորը միշտ իր կողքին կլինի և իր սխալները չի քննարկի այլոց ներկայությամբ:

Կարեկցելը – Մենթորը չի մոռանում, որ սկսնակ ուսուցիչը մարդ արարած է ու ապրում է իրական կյանքում, որը լի է ուրախ և տխուր միջադեպերով, և նա երբեմն կարող է դասարան մտնել դրսի կյանքի բեռն ուսերին: Պետք է կարողանալ լսել նրան, ժպտալ և նույնիսկ՝ գրկել ու մխիթարել:

Մի խոսքով՝ լինել նրա պաշտոնապես նշանակված, բայց իսկական ընկերը:

Արդյունավետ մենթորը պետք է ունենա օգնելու ձգտում, չզլանա ժամանակ ու ջանք ներդնել ուսուցչի աճի համար, պահպանի դրական մթնոլորտ, մոտիվացված լինի աճելու և զարգանալու: Նա մյուսների զարգացմանը նպաստելու համար պետք է գնահատի նաև սեփական աճը, ուսուցչին քննադատի այնպես, որ քննադատությունը դիտարկվի որպես իրավիճակին այլ տեսանկյունից նայելու հնարավորութ յուն, հարցերը ճիշտ ձևակերպի, տա բաց հարցեր, որոնք մտածելու, վերլուծելու առիթ են դառնում, ուշադիր լսի. սա օգնում է ուսուցչին զգալու, որ իր կարծիքը, տեսակետը գնահատվում է, ապահովի հետադարձ կապ. լսածը, տեսածը մանրակրկիտ ու օբյեկտիվորեն վերլուծելն ուուսուցչին ներկայացնելը նրան կօգնեն ինչպես այդ իրավիճակում, այնպես էլ հետագայում, խորհուրդներով հանդես գա. կիսվի իր փորձով ու իրավիճակին համապատասխան դիտարկումներով:

Արդյունավետ մենթորության կարևոր բաղադրիչներից է, երբ մենթորը վերանայում և մատնանշում է մենթիի առաջընթացը:

Մենթորության արդյունավետությունը գնահատվում է վերոնշյալ հանգամանքների առկայության և ուսուցչի հետադարձ կապի հիման վրա:

Ըստ էության մենթորը հանդիսանում է մոդել ու դասավանդող, խորհուրդների ու հուշումների աղբյուր, դասերը դիտարկող, հետադարձ կապ ապահովող, մոտիվացիա առաջացնող և պահպանող, գնահատող և մարտահրավերներ նետող:

Մենթորական փոխհարաբերությունների երեք փուլերը նպաստում են գործընկերության և անհատների զարգացմանը: Այս փուլերով անցնելով փոխվում են մենթոր-մենթի փոխհարաբերությունները: Եթե նախնական շրջանում մնթորը նախաձեռնող էր, իսկ ուսուցիչը արձագանքող, ապա վերջին փուլում ուսուցիչն է դառնում նախաձեռնող, իսկ մենթորը՝ արձագանքող:

Մենթորի աշխատանքի արդյունավետությունն ըստ էության, երևում է նրա կողմից աջակցություն ստացող ուսուցչի աշխատանքի արդյունավետության բարձացմամբ, մասնագիտական կարողությունների զարգացման համար սահմանված նպատակներին հասնելու հանգամանքով և ուսուցչի ինքնուրույն արդյունավետ աշխատելու ունակությամբ:

Մաս 3

Բաժին ա.

Հարցում մենթորի աշխատանքի արդյունավետության վերաբերյալ՝ աջակցություն ստացած ուսուցչական անձնակազմին և արդյունքների դիտատարկում

Հանրակրթության նոր չափորոշչի և ծրագրերի ներդրման փորձնական ծրագրով պայմանավորված՝ Տավուշի մարզի դպրոցներում դասավանդող ուսուցիչները 2021 թվականից ստանում են ուսումնական և մեթոդական աջակցություն ու խորհրդատվություն: Առարկայական նոր չափորոշիչներով և ծրագրերով աշխատելու առանձնահատկություններից ելնելով ուսուցիչներն անցել են վերապատրաստումներ: Մասնագիտական գիտելիքների և դասավանդման հմտությունների կատարելագործումը շարունակական պրոցես է: Այս հարցում ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչներին շարունակական աջակցում են մենթորները, ովքեր հանդիսանում է մոդել ու դասավանդող, խորհուրդների ու հուշումների աղբյուր, դասերը դիտարկող, հետադարձ կապ ապահովող, մոտիվացիա առաջացնող և պահպանող, գնահատող և մարտահրավերներ նետող:

Տավուշի մարզի հանրակրթության նոր չափորոշչի և ծրագրերի ներդրման փորձնական ծրագրով մենթորական աջակցություն ստացած ուսուցիչների շրջանում կատարված հարցումն ու արդյունքների վերլուծությունը ներկայացված է հավելվածում: Հարցմանը մասնակցած 15 ուսուցիչների կարծիքները ընդգրկում են 2021-2023 թթ. ընթացքում ստացած մենթորական աջակցության արդյունավետության մասին ցուցանիշներ:

Ստորև ներկայացված է հարցման արդյունքները մենթորի աշխատանքի արդյունավետության վերաբերյալ՝ վերոնշյալ ժամանակահատվածում մենթորական աջակցություն ստացած ուսուցիչների կողմից.

Մենթորը...	այո	ոչ	մասամբ
Աջակցող է և մարտահրավեր նետող	9	1	5
Լավ ունկնդիր է, ինչի արդյունքում ուսուցիչը զգում է, որ գնահատվում է իր տեսակետը	11	2	2
Ճկուն է և կարողանում է հարմարվել մենթիի անհատական կարիքներին	10	3	2
Ապահովում է ինչպես դրական, այնպես էլ բացասական քննադատական արձագանքներ	12	1	2
Հասանելի է և ներգրավված	11	2	2
Հոգում է մենթիի մասնագիտական կարիքների մասին	7	3	5
Զգայուն է մենթիի անձնական և մասնագիտական կարիքների նկատմամբ	5	5	5

Գտնում է որոշ գաղափարներ մենթիի հետ կիսվելու համար	12	2	1
Մենթիի հետ փոխհարաբերություններից օգուտներ է քաղում	6	6	3
Նպաստում է խնդիրների համատեղ լուծմանը	11	3	1
Հարգված է գործընկերների և ղեկավարության կողմից	13	1	1
Ողջունում է մենթիի նվաճումները	14	1	0
Համեստ է և ինքն իր արարքներին անդրադարձող	11	3	1
Չի զլանում ժամանակ ու ջանք ներդնել ուսուցչի մասնագիտական աճի համար	10	3	2
Ուսուցչին քննադատում է այնպես, որ այն դիտարկվում է իրավիճակին այլ տեսանկյունից նայելու հնարավորություն	5	8	2
Տալիս է բաց հարցեր, որոնք մտածելու, վերլուծելու առիթ են դառնում	10	2	3
Օբյեկտիվորեն և մանրակրկիտ վերլուծում է տեսածն ու լսածը և ներկայացնում ուսուցչին	7	3	5
Կիսվում է իր փորձով և իրավիճակին համապատասխան դիտարկումներով	12	2	1
Վերանայում և մատնանշում է ուսուցչի առաջընթացը	13	1	1
Պետք է ունենա մասնագիտական գիտելիքների բարձր մակարդակ, դասավանդման փորձ, տիրապետի ՏՀՏ	15	0	0
	204	**52**	**44**



Եզրակացություն

Մենթորը ուսուցիչներին աջակցելով երեք մակարդակներում, նպատակ է ունենում հասնելու ուսուցչի երրորդ՝ բարձր մակարդակի կարիքների բարելավմանը: Այն է՝ ուսուցչի համար հանդես գալ որպես հմտութ յուն ձևավորողներ:

Հարցման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մենթորական աջակցությունը ուսուցիչների շրջանում ունի դրական արձագանք: Այն անհրաժեշտություն է ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների մասնագիտական գիտելիքների և դասավանդման հմտությունների շարունակական կատարելագործման գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Encompassing Education (Ներառող կրթություն)» էլեկտրոնային մանկավարժական բլոգ-ամսագիր՝ https://incompassinged.com/2017/07/14/the-importance-of-mentoring-new-teachers/ ,, Սկսնակ ուսուցիչների մենթորության կարևորությունը,,

2. ,,Մենթորական աջակցության մեթոդաբանություն և գործիքակազմ,, Մանուկ Խաչատրյան
3. https://incompassinged.com/2017/07/14/the-importance-of-mentoring-new-teachers/

4. https://www.edutopia.org/article/every-teacher-needs-mentor

Հավելված

Հարցում _հետազոտական աշխատանք_ (Պատասխաններ) (1)

	A	B	C	D	E	F	G	H	I	J	K	L	M	N	O	P	Q	R	S	T	U	V
1	Ժամանակիշ	Ամսաթիվ	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթոր	Մենթորը [Դեռք է ունենա մա
2	4.25.2023 11:15:59	25.04.2023	այո	ոչ	մասամ	այո	այո	ոչ	մասամ	այո	ոչ	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո
3	4.25.2023 13:18:20	4/25/0023	մասամ	մասամ	ոչ	մասամ	մասամ	մասամ	ոչ	ոչ	մասամ	ոչ	մասամ	այո	ոչ	ոչ	մասամ	ոչ	մասամ	այո	մասամ	այո
4	4.25.2023 16:22:10	25.04.2023	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	ոչ	այո	այո	այո	այո	այո
5	4.25.2023 17:38:35	25.04.2023	մասամ	այո	այո	մասամ	ոչ	ոչ	ոչ	մասամ	ոչ	ոչ	այո	այո	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ	մասամ	այո	այո
6	4.25.2023 17:45:30	4/25/0023	այո	այո	ոչ	այո	ոչ	ոչ	ոչ	այո	այո	ոչ	այո	ոչ	ոչ	ոչ	ոչ	այո	ոչ	ոչ	ոչ	այո
7	4.25.2023 18:25:06	25.04.2023	մասամ	այո	մասամ	այո	այո	մասամ	մասամ	այո	ոչ	այո	այո	այո	այո	այո	մասամ	այո	այո	այո	այո	այո
8	4.25.2023 18:38:43	25.04.2023	այո	ոչ	այո	այո	այո	այո	ոչ	այո	այո	այո	այո	այո	այո	այո	ոչ	այո	այո	այո	այո	այո
9	4.25.2023 20:04:28	25.04.2023	այո	այո	ոչ	այո	այո	այո	ոչ	ոչ	ոչ	այո	ոչ	այո	այո	այո	ոչ	այո	այո	այո	այո	այո
10	4.26.2023 13:04:23	26.04.2023	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	ոչ	այո	այո	այո	այո	այո	ոչ	այո	այո	այո	այո	այո
11	4.26.2023 15:09:15	26.04.2023	այո	այո	այո	այո	այո	մասամ	մասամ	այո	մասամ	այո	այո	այո	այո	այո	ոչ	մասամ	մասամ	այո	այո	այո
12	4.26.2023 16:57:19	26.04.2023	ոչ	այո	այո	ոչ	այո	այո	այո	այո	ոչ	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո
13	4.26.2023 21:31:16	26.04.2023	այո	այո	այո	այո	մասամ	մասամ	այո	այո	այո	այո	այո	այո	մասամ	այո	այո	մասամ	ոչ	ոչ	այո	այո
14	4.26.2023 22:03:14	26.04.2023	մասամ	այո	այո	այո	այո	այո	մասամ	այո	մասամ	այո	մասամ	այո	այո	այո	ոչ	մասամ	մասամ	այո	այո	այո
15	4.27.2023 20:48:54	27.04.2023	այո	այո	այո	այո	այո	մասամ	մասամ	այո	այո	մասամ	այո	այո	այո	մասամ	այո	այո	մասամ	այո	այո	այո
16	4.27.2023 20:58:50	27.04.2023	մասամ	մասամ	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	մասամ	այո	այո	մասամ	այո	այո	այո
17																						

Մենթորը

Պատճենել



Մենթորը

Պատ



Մենթորը

Պատճենել